**30.04.2019թ. կնքված ԳՀԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2019-15-01 պայմանագրում փոփոխություն/լրացում կատարելու վերաբերյալ**

**համաձայնագիր № 1**

ք. Երևան

27 դեկտեմբերի 2019թ.

ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ի դեմս գլխավոր տնօրեն՝ Ա. Վանյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Գնորդ), մի կողմից, և Ա.Ի.Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (ԵՐՖԻ) հիմնադրամը, ի դեմս տնօրեն Ա.Ապրահամյանի, (այսուհետև՝Վաճառող) մյուս կողմից, հիմք ընդունելով քաղաքացիական օրենսդրությունը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017թ-ի մայիսի 4-ի 526-Ն որոշման 56-րդ կետի 4-րդ ենթակետը և №ԳՀԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2019-15-01 պայմանագրի 8.6 կետը, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

**1. Համաձայնագրի առարկան**

1. Հիմք ընդունելով պատասխանատու ստորաբաժանման զեկուցագիրը և 2017թ-ի մայիսի 4-ի 526-Ն որոշման 56-րդ կետի 4-րդ ենթակետը՝ կողմերը որոշեցին 2019թ. ապրիլի 30-ին կնքված № ԳՀԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2019-15-01 պայմանագրի մասով ապրանքի մատակարարման ժամկետը երկարաձգել 30 օրացուցային օրով:
2. Սույն համաձայնագրի 1-ն կետում նշված ժամանակահատվածում մատակարարվող ապրանքի մասով վճարման ժամանակացույցը կհաստատվի լրացուցիչ համաձայնագրի միջոցով 2020թ.:
3. Սույն համաձայնագիրը համարվում է № «ԳՀԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2019-15-01» գնման պայմանագրի անբաժանելի մաս:
4. Սույն համաձայնագրում չնշված կողմերի գնման պայմանագրով նախատեսված մյուս կետերը մնում են անփոփոխ:
5. Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից. սույն համաձայնագիր № 1-ն է հայերեն լեզվով, երկու օրինակից, որը ունի հավասարազոր իրավաբանական ուժ:

Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկ օրինակ:

**Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

ԳՆՈՐԴ
ԱՆ «ՀՎԿ ազգային կենտրոն» ՊՈԱԿ
Հասցե՝ ք. Երևան, 0025, Մ.Հերացի 12
Երևանի թիվ 1 ՏԳԲ
Հ/Հ 900018004649
ՀՎՀՀ 02625503
Գլխավոր տնօրեն՝ Ա.Վանյան /

................................
(ստորագրություն)
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
Ա.Ի.Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (ԵՐՖԻ) հիմնադրամ
Հասցե՝ ք. Երևան, Ալիխանյան եղբայրների 2
Արդշինբանկ Հ/Հ 2470100011020000
ՀՎՀՀ 01202364
Տնօրեն՝ Ա. Ապրահամյան

................................
/ստորագրություն/
Կ.Տ